Կին և քաղաքականությունը

Հատուկ թողարկում, սեպտեմբեր 2009

Անվճար հավելված

«Տատիկս ասում է՝ հավասարության մասին խոսելն ամոթ է»

էջ 4

Փաստաշար

Մի կաթիլ են ծովում

Հայաստանի 915 համայնքներից 49-ը քաղաքային են, 866-ը՝ գյուղական: Քաղաքապետների շարքում կին չկա, իսկ գյուղապետների մեջ՝ 23-ն են կին, այսինքն՝ ընդամենը 2,6%-ը: 2008-ի սեպտեմբեր-հոկտեմբերին անցկացված ՏԻՄ վերջին ընտրությունների արդյունքներով՝ ավագանիների կազմում ընտրվել է 4984 անդամ, որից ընդամենը 288-ն են կին: Այս համամասնությունը ավելի ցածր է քան նախորդ ընտրություններում արձանագրված արդյունքը, այն է՝ 8% կանայք ավագանիների կազմում: Երևանի ավագանու կազմում 65 անդամ է ընտրվել, որից ընդամենը 7-ն են կին:

Գյուղի կանանց միջազգային օրը

Հոկտեմբերի 15-ը գյուղի կանանց միջազգային օրն է: Այդ օրը նշելու գաղափարն առաջացել է դեռևս 1995 թ.՝ ՄԱԿ-ի Պեկինյան խորհրդաժողովում: Նպատակը՝ տարվա մեջ առնվազն մեկ անգամ հասարակությանը հիշեցնել, թե նա որքան է պարտական գյուղի կանանց, որքան արժեքավոր է նրանց աշխատանքը:

Գյուղի կանայք կազմում են երկրագնդի բնակչության մեկ քառորդից ավելին և ՄԱԿ-ի տվյալներով արտադրում են ողջ համաշխարհային պարենի կեսից ավելին, սակայն, չնայած այդ ներդրմանը, նրանց աշխատանքը հազվադեպ են ըստ արժանվույն գնահատում:

Նրանք հաճախ հնարավորություն չունեն պաշտպանելու իրենց հողի իրավունքը, օգտվել կենսականորեն կարևոր այնպիսի ծառայություններից, ինչպիսին են բժշկական սպասարկումը, վարկերը կամ ուսուցումը: Նրանք հազվադեպ են մասնակցում իրենց շահերին վերաբերող որոշումների կայացմանը:

Եվրոպայի խորհրդի մրցանակին արժանացել է 3 կուսակցություն

Եվրոպայի խորհրդի Կանանց ու տղամարդկանց հնարավորությունների հավասարության հարցով հանձնաժողովը սեպտեմբերի 8-ին Փարիզում կայացած նիստի ընթացքում որոշեց «Հանուն գենդերային հավասարության» մրցանակի երեք հաղթողներին: Առաջին դափնեկիրը կանանց առաջընթացը խթանելու առումով դարձավ Պորտուգալիայի սոցիալիստական կուսակցությունը, նրան հաջորդում են Մեծ Բրիտանիայի լեյբորիստական կուսակցությունն ու Շվեդիայի ձախ կուսակցությունը: Հիշեցնենք, որ մրցանակ սահմանելու մասին որոշումն ընդունվել էր ԵԽԽՎ-ի կողմից 2007-ի նոյեմբերին: Որոշման մեջ մտահոգություն էր հայտնվում, որ Եվրոպայի խորհրդի 47 անդամ-պետությունների ավելի քան կեսում կանանց ներկայացվածությունը խորհրդարանում 20%-ից ցածր է:

Կանայք, ում վստահել են ղեկը...

Նրանք ընդամենը 23-ն են: Կանայք, որոնք ղեկավարում են Հայաստանի 866 գյուղական համայնքներից գուցե ամենադժվարները: Նրանց բաժին են ընկել հիմնականում սահմանամերձ, փոքր, բայց բազմաչարչար, աղքատ համարվող գյուղեր, որոնց բնակիչները գուցեև ճարահատյալ էին հրաժարվել նախապաշարմունքներից և ղեկը վստահել կնոջը: Պատկերացրեք՝ մինչ օրս էլ չեն փոշմանել, և, ինչպես ցույց է տալիս փորձը, գրեթե բոլոր այդ կանայք վերընտրվում են իրենց պաշտոններում երկրորդ, երրորդ, չորրորդ անգամ...

Վայելելով համագյուղացիների տարեցտարի աճող վստահությունը՝ նրանք դժվար թե մոռանան, թե ինչպես համարձակվեցին անել այն վճռական քայլը, որը փոխեց նրանց կյանքը, օգնեց բացահայտել առաջին հայացքից սովորական թվացող գյուղի այդ կանանց մեջ թաքնված ներուժը: Ի դեպ, շատերը նրանցից բազմազավակ մայրեր են:

Առաջնորդի հատկանիշներն ի հայտ եկան գուցեև հանգամանքների բերումով: Բայց կողքին էին նաև մարդիկ, որոնք հավատում էին, հարազատներ, որ հասկանում և օգնում էին, ծանոթ-անծանոթներ, որոնք համոզում էին պայքարել և հաղթել...

Այս կանանցից շատերի համար որոշիչ դեր խաղաց նաև մասնակցությունը ՕՔՍՖԱՄ-ի և նրա գործընկեր կազմակերպությունների ծրագրերին ու դասընթացներին: Ոմանց համար դա կարևոր որոշում ընդունելու խթան էր, մյուսները գիտելիքները խորացնելու հնարավորությունից օգտվեցին: Ոմանք էլ մասնակցելով այդ նույն ծրագրերի՝ օրինակ էին ծառայում սկսնակների համար: Միավորվել էին սկզբունքի շուրջ, որ պարզ էր և համոզիչ յուրաքանչյուրի համար. խթանել կանանց մասնակցությունը և առաջնորդությունը, քանի որ նրանց ներկայացությունը որոշումների կայացման բոլոր մակարդակներում կստիպի առավել մեծ ուշադրություն դարձնել կանանց, ընտանիքին, երեխաներին առնչվող խնդիրներին:

«Կնիկ արմատը ռուլի հետ ի՞նչ գործ ունի»,- ժամանակին տարակուսում էին Արեգնադեմի գյուղապետ Աղուն Հազրյանի համագյուղացիները:

Զրուցելով կին գյուղապետների և նրանց համագյուղացիների հետ՝ մենք հեշտությամբ համոզվեցինք այդ սկզբունքի իրատեսության մեջ:

«Ես չէի ասի՝ տղամարդն ավելի վատ է աշխատում, բայց այն, ինչ կատարում է կինը, տղամարդը չի անի. համբերատար լսի բնակչին, նրա հոգսերով ապրի... Կինը նաև կարողանում է ցանկացած իրավիճակում հաշտեցման եզրեր գտնել, ձգտում է համոզել, ավելի բարեխղճորեն է կատարում իր պարտականությունները»,- ասում է Արեգնադեմի գյուղապետ Աղուն Հազրյանը: Ի դեպ, նրա համագյուղացիների համար «կին գյուղապետ» բառակապակցությունը վաղուց արդեն խորթ չի հնչում, հակառակը՝ երբ հարցնում են՝ ո՞ր գյուղից եք, հպարտությամբ պատասխանում են. «Մենք Աղունի համայնքից ենք...»

Շարունակությունը՝ էջ 2

ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան մասնաճյուղ

«Կանայք ծրագրերի սիրտն ու հոգին են»

ՕՔՍՖԱՄ-ը անկախ միջազգային բարեգործական կազմակերպություն է, որը հիմնվել է Մեծ Բրիտանիայում ու զբաղվում է զարգացման խնդիրներով: «Մենք համոզված ենք, որ աղքատությունը կանխորոշված փաստ չէ, այլ կենսական անարդարություն, որը հնարավոր է հաղթահարել»՝ այս առաքելությամբ է առաջնորդվում կազմակերպությունը՝ աշխատելով աշխարհի ավելի քան 70 երկրներում և ձգտելով նրանց համար գտնել աղքատությունից ու տառապանքներից դուրս գալու արդյունավետ ուղի:

ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան մասնաճյուղը հիմնադրվել է 1994-ին: Սկզբնական շրջանում կազմակերպությունն իրականացնում էր միայն մարդասիրական օգնության ծրագրեր՝ աջակցելով բնակչության առավել անապահով խավերին (կենսաթոշակառուներ, հաշմանդամներ, միջտարածաշրջանային բախումներից ու երկրաշարժից տուժած ընտանիքներ): 1997 թվականից ՕՔՍՖԱՄ-ն անցավ զարգացման ու կենսամակարդակի բարձրացման ծրագրերի՝ ակտիվորեն գործելով առաջնային առողջապահության ապահովման, հատկապես՝ գյուղական համայնքներում, փոքր բիզնեսի աջակցության, մարդու իրավունքների պաշտպանության ու հասարակության ժողովրդավարացման ոլորտներում: Այսօր էլ Հայաստանում կազմակերպության իրականացրած ծրագրերը էական ավանդ են հանրապետությունում աղքատության կրճատման գործում, ինչը հատկապես հրատապ է համաշխարհային տնտեսական ճգնաժամի լույսի ներքո:

Հավատարիմ մնալով իր հիմնական առաքելությանը՝ պայքարել աղքատության և մարդկային տառապանքի դեմ, ՕՔՍՖԱՄ կազմակերպությունը մեծ ուշադրություն է դարձնում կանանց հավասար մասնակցության իրավունքի իրականացմանը և հավասար հնարավորությունների ապահովմանը: Կազմակերպության բոլոր ծրագրերը՝ մարդասիրական ու զարգացման, մշակվում և իրականացվում են այնպես, որ կանայք առավել մեծ դեր խաղան իրենց կյանքին վերաբերող որոշումների կայացմանը: Օրինակ՝ ՕՔՍՖԱՄ-ն իր գործընկեր կազմակերպությունների հետ հատուկ դասընթացներ է անցկացնում տեղական ընտրություններին մասնակցել ձգտող կանանց համար, իսկ Տավուշի մարզի չորս քաղաքներում ստեղծված Կանանց շահերի պաշտպանության խմբերը սերտորեն համագործակցում են համայնքապետների և ավագանիների հետ՝ համայնքի բյուջեին առավել սոցիալական ուղղվածություն հաղորդելու և համայնքի խնդիրներին ակտիվ կանանց տեսանկյունից լուծումներ գտնելու նպատակով:

Որոշումների կայացման տեղական մակարդակում կանանց դերի բարձրացման ուղղությամբ ՕՔՍՖԱՄ-ը Հայաստանում մի շարք ծրագրեր է իրականացնում.

- Տավուշի մարզում՝ «Կանանց դերն ու ձայնը կառավարման գործընթացում» (իրականացվում է ՕՔՍՖԱՄ-ի գործընկեր «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կողմից),

- Սյունիքի մարզում՝ «Գյուղական համայնքներում կանանց քաղաքացիական ակտիվության խթանում» (իրականացվել է ՕՔՍՖԱՄ-ի գործընկեր «Ընդդեմ իրավական կամայականության» (ԸԻԿ) ՀԿ-ի կողմից,

- Շիրակի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում՝ «Համայնքի ձայնը լսելի դարձնել որոշումների կայացման գործընթացում» (իրականացվում է ՕՔՍՖԱՄ-ի գործընկերներ Շիրակի հասարակական կազմակերպությունների միության և ԸԻԿ ՀԿ-ի ջանքերով):

Հարցազրույցը ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն

Մարգարիտա Հակոբյանի հետ՝ էջ 3

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՃԵԼԸ

Աղուն Հազրյան.
«Ինձ սպարողները հենց տղամարդիկ են եղել»...

«Արթնանում եմ առավոտ ծեգին, ոնց որ գյուղի բոլոր կանայք, զբաղվում եմ տան գործով, գոմ եմ մտնում, հաց թխում, նախաճաշ պատրաստում և հետո շտապում աշխատանքի, իսկ այն, ինչ չեմ հասցնում անել աշխատանքի վայրում, լրացնում եմ տանը՝ իմ քնելու հաշվին: Մինչև ուշ գիշեր նստում եմ համակարգչի առջև և չեմ հոգնում, ընդհակառակը՝ ինձ ոգևորում է այն միտքը, որ շատ ծրագրեր, որոնք հենց այս համակարգչի առջև են ծնվել, այսօր իրականություն են». այսպես է նկարագրում իր օրը Ամասիայի տարածաշրջանի Արեգնադեմի գյուղապետ Աղուն Հազրյանը: Շիրակի մարզում 119 համայնք կա, և միակ կին գյուղապետը նա է:

Տիկին Հազրյանի ընտանիքն առաջիններից էր, որ երկրաշարժից հետո վերաբնակվեց Արեգնադեմ գյուղում: Առաջին հայ երեխան, որ ծնվեց այս գյուղում, նրա առաջնեկն էր՝ Անդրանիկը:

«Հնարավորություններ են եղել Երևանում կամ այլ տեղ բնակվելու, սակայն ամուսնուս հետ որոշեցինք հենց այստեղ մնալ: Շատ եմ սիրում իմ գյուղը և հենց սկզբից էլ ցավում էի, որ համայնքն առաջընթաց չէր ապրում, օր օրի եղածն էլ քանդվում էր: Որոշեցի դառնալ գյուղի ղեկավար, որ կարողանամ փոխել կյանքը...»:

Այդ որոշումը հեշտությամբ չտրվեց Շիրակի մարզի միակ կին թեկնածուին, որ ընտրապայքարի մեջ մտավ երկու տղամարդ թեկնածուների հետ:

- Հայաստանի հյուսիսում դեռ շատ խորն են նստած կնոջ մասին կարծրացած պատկերացումները: Այստեղ խորթ է, երբ կինը տաբատ է հագնում, անընդունելի է մեքենա վարելը, ուր մնաց, կինը՝ լիդեր, ղեկավար լինի, այն էլ՝ իրենց գյուղի ղեկավարը,- պատմում է տիկին Հազրյանը և հավելում,- որքան էլ հակասական հնչի, միևնույն է, այդ ամենի հետ մեկտեղ՝ ինձ սատարողները հենց տղամարդիկ են եղել. գուցե արտաքուստ ցույց չեն տվել, խանդով են նայել, բայց իմ կողքին են եղել:

Առաջին քաջալերողը ամուսինն էր: «Ամեն կերպ մղում, համոզում էր ինձ, ասում էր՝ եթե գյուղապետ դառնաս, շատ բան կփոխվի: Երեխաները մի փոքր տրտնջում էին, հատկապես աղջիկս, որովհետև տան հոգսի մի մասը նրա ուսերին էր ընկնելու, սակայն ներքին մի հպարտություն կար նրանց մեջ: Ընտանիքիս աջակցությամբ և օգնությամբ եմ միայն ես այսօր այս պաշտոնն զբաղեցնում»,- պատմում է նա:

Համայնքի ղեկավար ընտրվելուց հետո նոր խնդիրների ու նոր փորձությունների հանդիպեց: Բազում չլուծված խնդիրներ ունեցող համայնք և անընդմեջ մարդկանց ապացուցելու անհրաժեշտություն, որ կինը նույնպես կարող է լավ ղեկավար լինել:

Սակայն այս տարիների ընթացքում շատ բան է հաղթահարել գյուղապետը: Ունեցել է և անձնական հաղթանակներ, գյուղն էլ նրա համառության շնորհիվ նույնպես ունեցել է ձեռքբերումներ. 20 տարի քանդված լինելուց հետո վերակառուցվել է Արեգնադեմի արևելյան և արևմտյան հատվածները իրար կապող միակ օղակը՝ կամուրջը, պարբերաբար վերանորոգվում են համայնքային ճանապարհները:

Հազրյանի նախաձեռնությամբ գյուղը համագործակցում է բազմաթիվ միջազգային կազմակերպությունների հետ, որոնց օգնությամբ վերանորոգվել է բուժկետը, երիտասարդների համար կառուցվել և կահավորվել է ժամանցի կենտրոն, որտեղ տարբեր խմբակներ են գործում:

«Սակայն կա մի խնդիր, որը պահանջում է կառավարության աջակցությունը. գյուղը չունի դպրոցի շենք: Դասերն անցկացվում

են հատուկ տրամադրված տներում, որոնք, ճիշտ է, պարբերաբար վերանորոգվում են, սակայն սա խնդրի լուծում չէ: Գյուղն ունի 450 բնակիչ, 110 տնտեսություն, և միգրացիայի հիմնական խնդիրը հենց դպրոցի շենքի բացակայությունն է. չէ՞ որ յուրաքանչյուր ծնող լավ պայմաններ է ցանկանում իր երեխայի համար»,- մտահոգված է Հազրյանը:

Անցյալ տարի՝ աշնանը նա երկրորդ անգամ վերընտրվեց գյուղապետի պաշտոնում. «Ամեն ինչ հնարավոր է, չհասցնելը միայն պատրվակ է, մարդն ինչին ձգտում է, միշտ հասնում է, միայն ցանկություն է հարկավոր»,- համոզված է գյուղապետ Աղունը, որն ասվածը իր օրինակով է հաստատում:

Լինելով գյուղապետ, ունենալով ամուսին և երեք երեխա՝ նա գտել է ժամանակ նաև ուսման համար. մեր զրույցը տեղի ունեցավ Ուկրաինական համալսարանում, որտեղ տիկին Հազրյանը ժամանակ է գտել սովորելու իրավաբան-տնտեսագետ մասնագիտությամբ՝ հաշվառում և աուդիտ բաժնում (մինչ այդ ավարտել է պոլիգրաֆիական տեխնիկումը և արվեստի համալսարանը):

Լիլիթ Քոչինյան

«Բացակայություններ չեն լինում, գրավորները պարտաճանաչորեն հանձնում եմ, ինչոր տեղ և կարմրում, երբ որևէ հարցում թերացած եմ լինում»,- ասում է տիկին Հազրյանը և ժպիտով նշում, որ անգամ այստեղ կուրսի ավագն է:

Անահիտ Հակոբյան.
«Եթե կինը զենք է վերցրել ու պաշտպանել է իր երկիրը, ուրեմն ղեկավարել միանշանակ կարող է»

Իր փոքրիկ ուսերին ահռելի «բեռ» վերցրած Անահիտ Հակոբյանը միայն մի երազանք ունի՝ ինչ որ անում է, պատվով կարողանա ավարտին հասցնել:

Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում է գտնվում նախկին ադրբեջանաբնակ Տորունիք գյուղը: Գյուղի ներկայիս բնակիչները Ադրբեջանի տարբեր շրջաններից տեղահանված և սեփական հայրենիքում նոր տուն ու տեղ դրած հայեր են, որոնք տարիներ առաջ իրենց կենսագրության մի մասը թողել են օտարի հողում և չեն կարողանում համակերպվել նոր բնակավայրին: Գյուղում համերաշխության և հանդուրժողականության մթնոլորտի պահպանման հարցը երևի թե առաջնային խնդիրներից է եղել, որը կամաց-կամաց կարգավորվել է ներկայիս գյուղապետ Անահիտ Հակոբյանի օրոք:

2006 թ. է Տորունիքի գյուղապետ ընտրվել Անահիտ Հակոբյանը: Նա 17 տարի եղել է համայնքի գյուղխորհրդի քարտուղարը և քաջատեղյակ է թե՛ համայնքի և թե՛ գյուղի հոգսերին: «Ընտանիքում եթե ինձ չօգնեին, ես ոչնչի չէի հասնի,- ասում է չորս երեխաների մայր, յոթ թոռների տատ Անահիտ Հակոբյանը: - Ամուսինս, ի տարբերություն ինձ, շատ համեստ մարդ է: Ամուսնուս ասում եմ՝ ես ուր մտնեմ, դու արի՝ իմ կողքին կանգնի, մնացածը ես ինչ-որ պետք է կխոսեմ: Բայց ընտրությունների ժամանակ շատ է օգնել, բանակցել մարդկանց հետ»:

143 բնակիչ և 33 տնտեսություն ունի Տորունիքը, որտեղ ապրում են երիտասարդ ընտանիքներ, միայնակ ծերեր: Համայնքը հիմնականում զրկված է ջրից: Ադրբեջանցիներն իրենց տներից հեռանալիս փակել են ջրի ակունքները: Բարձրաստիճան պաշտոնյաները գյուղ են այցելում ընտրությունից ընտրություն: Կա դպրոց, ուր հաճախում է 16 աշակերտ: Իր ամենամեծ նվաճումներից է համարում այն, որ գյուղում կարողացել է մարդկանց համախմբել ու հաշտեցնել: «Եղել են դեպքեր, որ նույնիսկ ինձ են վիրավորել գյուղի բնակիչները, բայց հաջորդ օրը ես նույն այդ մարդուն բարևել եմ ու մտել գյուղապետարանի շենք՝ իմ օրինակով ցույց տալով, որ հարկավոր է մի քիչ ավելի հանդուրժող և բարի լինել»:

Փոքրամարմին այս կինն աչքիս առաջ շարունակ փոխվում էր. երբ պատմում էր աղջիկների ու թոռների մասին, աչքերն սկսում էին փայլել, հիշատակելով ամուսնուն և ներընտանեկան հարաբերությունները՝ համեստորեն շիկնում էր, ինչպես մի դեռահաս աղջնակ, սակայն լրիվ կերպարանափոխվում էր, երբ խոսում էր գյուղի հոգսերի, խնդիրների, ապագա ծրագրերի մասին: Իմ առջև մի կին էր, որն ամեն վայրկյան պատրաստ է անգիջում պայքարել, կռիվ տալ, ինչպես ինքն էր ասում՝ «վերևում նստած չինովնիկի հետ», որպեսզի կարողանա տորունիքցու առօրյան մի փոքր տանելի դարձնել: «Ախր գիտե՞ք ինչ պայմաններում են ապրում իմ գյուղի մարդիկ, շատ-շատերը չէին դիմանա»,- անկեղծանում էր նա:

«Ժամանակին ես էլ կարող էի համայնքից հեռանալ ու ավելի բարեկեցիկ կյանքով ապրել,- ասում է տիկին Անահիտը,- սակայն հորս խոսք էի տվել՝ Երևանում կրթություն ստանալուց հետո վերադառնալ հայրենի գյուղ, ընտանիք կազմել ու երբեք ծննդավայրս չլքել: Ես կատարել եմ իմ բոլոր խոստումները: Դեռ ավելին՝ ընտրվել եմ գյուղապետ և հիմա պայքարում եմ, որ այսօրվա տորունիքցին էլ սիրի իր հողը, հնարավորություն ունենա ապրել, արարել ու էլ երբեք օտարի հողում թողած տուն ու տեղը չկարոտել...»:

Արմինե Գրիգորյան

Լուսինե Ավետյան.
«Գյուղի հոգսերն իմ հոգսերն են»

Անմնացորդ նվիրում գործին, անշահախնդրություն, բարի կամեցողություն յուրաքանչյուրի հանդեպ՝ սա է Լուսինե Ավետյանի, ով արդեն 7 տարի Քարահունջի գյուղապետն է, հաջողության բանաձևը: Քարահունջը բոլորին հայտնի է իր թթենու այգիներով ու թթի օղիով, բայց միևնույն ժամանակ Սյունիքի մարզի առաջին գյուղն էր, որտեղ ընտրվեց կին գյուղապետ:

Լուսինե Ավետյանը 7 տարի շարունակ Քարահունջ գյուղի դպրոցում տարրական դասարանների դասվար էր, իսկ դասերից հետո՝ գյուղապետարանի կողքին գտնվող իրենց խանութում վաճառող: Ամեն օր շփվելով գյուղացիների հետ՝ առնչվում էր նրանց անլուծելի դարձած խնդիրներին, տեղեկանում էր յուրաքանչյուրի հոգսերին ու մտահոգություններին, որոնց գումարվում էր նաև իր և բազմաթիվ աշխատող մայրերի խնդիրը՝ մանկապարտեզ բացելու անհրաժեշտությունը: Շենքը կար, բայց անմխիթար վիճակում էր, իսկ գյուղապետին ուղղված բազմաթիվ խնդրանքները մնում էին անպատասխան: Հենց այդ ժամանակ էլ ՏԻՄ ընտրությունների վերջին օրը Լուսինեն վճռեց առաջադրել իր թեկնածությունը՝ համոզված լինելով, որ ընտրվելու դեպքում կկարողանա լուծել այդ խնդիրները: Զարմանալին այն էր, որ միայն այս խնդիրն օրակարգում ունենալով՝ առանց քարոզարշավի, քանի որ արդեն ժամանակ չէր մնացել, նա հաղթում է իր մրցակից 6 տղամարդկանց:

- Նախորդ գյուղապետն ինձ բավական ծանր ժառանգություն թողեց,- պատմում է նա,- հիմնանորոգման կարիք ունեին ոչ միայն գյուղի մանկապարտեզը, բուժկետը, դպրոցը, մշակույթի տունն ու գյուղապետարանը: Անմխիթար վիճակում էին գյուղի փողոցները, կոյուղին ընդհանրապես բացակայում էր, ոռոգման ջրագիծ նույնպես չկար: Համակարգեցինք խնդիրները, եռամյա ծրագիր կազմեցինք և, աշխատելով տարբեր միջազգային կազմակերպությունների հետ, կարողացանք լուծել խնդիրների մեծ մասը, դեռևս մնում են ասֆալտապատումն ու մշակույթի տունը:

Լուսինե Ավետյանը ժպիտով է հիշում այն դեպքը, երբ գյուղապետների ճաշկերույթի ժամանակ իրեն չէին հաշվել:

Շատ դժվար եղավ կոտրել ավանդական կարծրատիպերը, որ կինը, թողած ընտանիքը, հողամասը, կենցաղային անվերջանելի հոգսերը, պետք է լուծի գյուղի խնդիրները: Թերևս դա իսկապես էլ անհիրականանալի լիներ, եթե Լուսինեին սատար չլիներ իր ընտանիքը՝ ամուսինը, երեք երեխաներն ու սկեսուրը: Արդեն անցել են այն ժամանակները, երբ մարզխորհրդի նիստերում, ամենատարբեր ժողովներում իրեն նայում էին զարմանքով, և ինքն էլ վատ էր զգում, որ տղամարդկանց շրջանում միակ կինն է: Այժմ բոլորն են ճանաչում Լուսինե Ավետյանին, սիրում և հարգում: Իսկ վերջերս նա մերժեց պատգամավորական մանդատը.

- Ինձ համար ընտանիքը միշտ էլ ավելի կարևոր է: Եթե համաձայնեի և գնայի Երևան, ընտանիքի տեղափոխման հարց պիտի ծագեր, կամ էլ ամբողջ օրը ճանապարհներին պիտի անցկացնեի: Շատ են հարցրել՝ չե՞ս փոշմանել, բացարձակ ոչ, քանի որ գյուղում դեռևս շատ անավարտ գործեր կան, այստեղ ես ավելի շատ բան ունեմ անելու:

Վերջին յոթ տարիների ընթացքում շատ բան է փոխվել ոչ միայն գյուղում, այլև գյուղացիների մեջ. եթե նախկինում կանայք իրենց հարցերով չէին դիմի գյուղապետին, ապա այսօր ազատ կարող են դիմել՝ վստահ լինելով, որ իրենց բարձրացրած հարցերը լուծում կստանան: Վերջին ընտրությունների ժամանակ ավագանու անդամ ընտրված 6 հոգուց երկուսը կին են՝ Նարինե Մնացականյանը և Ռոմելան Մկրտչյանը, ովքեր նույնպես օգնում են վեր հանել համայնքում առկա կանանց խնդիրները:

- Կանայք ավելի պատասխանատու են, ավելի հաճախ են այցելում նիստերին, երբեք չեն ուշանում և ավելի նրբանկատ են, մանավանդ հիմա, երբ մենք մի գերխնդիր ունենք. գյուղում 40 տուն սողանքային գոտում է, և բնակիչներին շտապ պետք է տեղափոխել, քանի որ այդ տներում ապրելն անհնար է և վտանգավոր...

Կարինե Պետրոսյան

Դիրքորոշում

Կանայք ՕՔՍՖԱՄ-ի ծրագրերի սիրտն ու հոգին են

Մեր զրույցը ՕՔՍՖԱՄ (ՄԲ) հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Մարգարիտա Հակոբյանի հետ ծավալվեց «Կանայք ծրագրերի սիրտն ու հոգին են» կարգախոսի շուրջ: Ինձ հատկապես հետաքրքրում էր՝ ի՞նչ տեղ են զբաղեցնում կանանց հզորացման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացմանն ուղղված ծրագրերը ՕՔՍՖԱՄ-ի բուն առաքելության՝ աղքատության և մարդկային տառապանքի նվազեցման շրջանակներում...

- Գենդերային հիմնախնդիրներին առնչվող ծրագրերը ՕՔՍՖԱՄ-ի գործունեության շրջանակներում սկզբունքային բնույթ են կրում և լիովին համահունչ են կազմակերպության առաքելությանը:

Գլոբալ առումով արված հետազոտությունները փաստում են, որ ամբողջ աշխարհում ավելի շատ աղքատ են կանայք, քան տղամարդիկ: Կանանց նկատմամբ խտրական դրսևորումները նկատելի են ոչ միայն սոցիալական, այլև քաղաքական, տնտեսական, քաղաքացիական առումներով: Ապացուցման կարիք չունի նաև այն, որ կենցաղում իր ուսերին ընկած բազմաթիվ պարտականությունների համար կինը չի վարձատրվում, աշխատում է անվճար, ասես դա «ի վերուստ» նրա կոչումը լինի: Հենց այս կրկնակի ծանրաբեռնվածությունից էլ սկսվում է խտրականությունը: Այն շարունակվում է գործի տեղում, երբ նույն աշխատանքի դիմաց կանայք, որպես կանոն, ավելի քիչ են վարձատրվում, քան տղամարդիկ: Մի խոսքով, կանայք, կարծես, ավելի ստորադաս պայմաններում են, և հատկապես դա դրսևորվում է որոշում կայացնելու մակարդակում: Խոսուն օրինակ է Հայոց խորհրդարանը, որում կանանց ներկայացվածությունը 10%-ի էլ չի հասնում, այն պարագայում, երբ աշխարհում միջին ցուցանիշը 18.5% է: Մեր ծրագրերի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղական ինքնակառավարման մարմիններում էլ կանանց ներկայացվածությունը չափազանց ցածր է: Այստեղ պետք է հաշվի առնել մի քանի գործոններ, որոնց շարքում ամենաազդեցիկը հասարակության մեջ իշխող կարծրատիպն է՝ ղեկավար պաշտոնում պետք է տղամարդ լինի: Դրա հետ մեկտեղ կանայք հաճախ թերագնահատում են իրենց հնարավորությունները՝ գերագնահատելով տղամարդկանց:

- Եթե համեմատելու լինենք քաղաքի և մարզերի կանանց, որտե՞ղ են կարծրատիպերն ավելի շատ, և որտե՞ղ է ավելի շատ դրանք հաղթահարելու վճռականությունը:

- Քաղաքում կանայք ավելի իրազեկված են, ունեն ինքնադրսևորվելու ավելի շատ հնարավորություններ, և շփումների մակարդակն ավելի լայն է: Մարզերում այդ հնարավորությունները կամ ավելի քիչ են, կամ ընդհանրապես չկան, ուստի այնտեղ կարծրատիպերն ավելի շատ են ու առավել արմատացած: Անհրաժեշտ է հաշվի առնել անգամ մարզերի միջև գոյություն ունեցող առանձնահատկությունները: Օրինակ՝ Տավուշի, Սյունիքի, Շիրակի մարզերում նկատելի է ակտիվություն, Գեղարքունիքն աչքի է ընկնում պասիվությամբ: Մի կարևոր հանգամանք ևս. փախստականներով բնակեցված գյուղերում կանայք ավելի ակտիվ են: Բացատրություններից մեկն այն է, որ փախստականների որոշ մասը քաղաքից է եկել: Ընդհանուր առմամբ, գյուղական վայրերում ավելի դժվար է կանանց վստահություն ներշնչել, սովորեցնել նրանց չհամեմատվել նույն ունակություններ ունեցող տղամարդկանց հետ, սովորեցնել ո՛չ թերագնահատել և ո՛չ էլ գերագնահատել իրենց, այլ, պարզապես, գնահատել:

Մենք նաև սովորեցնում ենք կանանց, թե ինչպես ներկայացնել իրենց խնդիրները տեղական ինքնակառավարման մարմին, ինչպես հետամուտ լինել դրանց լուծմանը:

- Գոյություն ունի կարծիք, որ կին-առաջնորդը կամա թե ակամա ձեռք է բերում տղամարդուն բնորոշ որոշ հատկանիշներ, կորցնում է կանացիությունը:

- Ի՞նչ նկատի ունեք՝ «տղամարդուն բնորոշ հատկանիշներ» ասելով... Եթե խոսքը համառության, նպատակասլացության, ինքնավստահության մասին է, ապա դրանք ընդհանուր, մարդկային հատկանիշներ են: Չգիտես ինչու, մեզ մոտ հասարակությունը ավելի շատ քննադատաբար մոտենում է ղեկավար կնոջը, քան նույն պաշտոնը երբեմն ավելի վատ վարող տղամարդուն: Իմ կարծիքով՝ դրա պատճառն այն է, որ մեր աչքը սովոր չէ պաշտոնատար կանանց տեսնել: Ամեն դեպքում պաշտոն պետք է զբաղեցնի արժանավորը, ու եթե դա կին է՝ խելացի կին, մեր հասարակությունը պետք է կարողանա գնահատել նրան և ձգտի, որ նման կանայք ավելի շատ զբաղեցնեն վերադաս պաշտոններ: Մի բան ևս, թեև սա իմ անձնական կարծիքն է, և ոմանք կարող են չհամաձայնել ինձ հետ: Կարծում եմ՝ եթե կանայք ավելի շատ պաշտոններ զբաղեցնեն, կոռուպցիայի նվազման միտում կնկատվի:

- Իսկ Ձեր աշխատանքային ուղին... Երբևէ Ձեզ վրա զգացե՞լ եք գենդերային խտրականության դրսևորում:

- Շատ բան կախված է անձից: Իհարկե, չես կարող հասարակության ազդեցությանը չենթարկվել, բայց եթե ցանկություն ունես, տեսնում ես դրա լուծման մեխանիզմը և վստահ ես քո ուժերին, կարող ես դա անել: Խնդիրն այն է, որ պետական կառույցներում ու միջազգային կազմակերպություններում ունեցած աշխատանքային փորձս տարբերվում է: Ըստ իս՝ այն հնարավորությունները, որ ստեղծվում են միջազգային կազմակերպություններում, նպաստում են կարիերայի աճին: Կարելի է ասել, որ ես անձամբ չեմ հանդիպել խոչընդոտներ, կամ, ավելի ճիշտ՝ դրանք եղել են ոչ խտրական բնույթի...

Կինը պետք է հասկանա, որ նախապատվությունը տրվում է ոչ թե նրա համար, որ նա կին է, այլ նրա գիտելիքները հավասար են կամ նույնիսկ գերազանցում են մրցակիցներին և... նպատակադրված գնա նրան, ինչին ձգտում է:

Զրուցեց
Սուսաննա Հովհաննիսյանը

«Լսելի դարձնել կանանց ձայնը»

Դիլիջանում «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կանանց շահերի պաշտպանության խմբի հավաքներից մեկում

Այսպես է կոչվում այն եռամյա ծրագիրը, որն իրականացնում է ՕՔՍՖԱՄ-ի գործընկեր «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը Տավուշի մարզի 4 քաղաքներում՝ Դիլիջանում, Իջևանում, Նոյեմբերյանում և Բերդում: Ծրագրի նպատակն է խթանել համայնքներում կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում և ընդհանուր առմամբ բարձրացնել նրանց ակտիվությունը: Ծրագրի առանձնահատկությունն այն է, որ նրա թիրախ խմբում են առավել խոցելի համարվող հաշմանդամ կանայք և հաշմանդամ երեխաների մայրեր: Անցյալ տարվա հոկտեմբերից ծրագրի շրջանակներում ձևավորված Կանանց շահերի պաշտպանության խմբերը կոչված են ներկայացնել համայնքներում առկա խնդիրները որոշումների ընդունման մակարդակում և փորձել դրանց լուծումներ տալ: Խմբերում ընդգրկված են նաև արդեն իսկ ղեկավար օղակներում աշխատող կանայք, ինչը լսելի է դարձնում համայնքի կանանց ձայնը:

Փորձագետի անկյուն

Գյուղ ղեկավարելը ծանր գործ է, բայց գյուղի կին լինելը՝ կրկնակի ծանր է



Թեև տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածության մասին առաջին մեր հետազոտությունից երկու-երեք տարի է անցել, սակայն այս հարցում քիչ բան է փոխվել: Դարձյալ կանայք միայն 23 գյուղական համայնք են ղեկավարում: Հիմնականում դրանք փոքր (մինչև հազար բնակիչ ունեցող) գյուղեր են՝ դեռ խորհրդային ժամանակներից մնացած հիմնախնդիրներով: Այդ գյուղերի մեծ մասում կին ղեկավարը կարգ ու կանոն հաստատելու վերջին հույսն է: Անգամ հարևան գյուղերի տղամարդիկ խոստովանում են, որ կընտրեն կին թեկնածուին, որովհետև արդեն հոգնել են տղամարդ գյուղապետներից: Նրանց կարծիքով՝ կինը կոնֆլիկտային իրավիճակում ավելի պատրաստ է զիջումների գնալ, միշտ կլսի, կփորձի հարթել պրոբլեմը համագործակցության միջոցով: Դրա հետ մեկտեղ մեր զրուցակիցները մատնանշում էին նաև կին գյուղապետների պրակտիկայում ծագող դժվարությունները: Գաղտնիք չէ, որ Հայաստանում կարևոր որոշումները հաճախ ընդունվում են ոչ ֆորմալ ինստիտուտներում, իսկ կինը չի կարող «պետքական մարդկանց» հրավիրել կերուխումի, ուշ ժամի բացակայել՝ հազար ու մի ասեկոսեների զոհ չդառնալու համար: Ո՞ր տղամարդուն դուր կգա, որ ասեն՝ կնոջդ տեսել ենք այսինչ վայրում մի խումբ մարդկանց հետ, թեկուզև համայնքի խնդիրները քննարկելիս: Սակայն նմանատիպ հարցադրումները առաջ էին քաշում որպես կանոն տղամարդիկ: Կին գյուղապետները խոստովանում էին, որ աշխատում են խնդիրները լուծել ֆորմալ ինստիտուտներում և դա նրանց հաջողվում է:

Գյուղական համայնքը ավելի մեծ պահանջներ է ներկայացնում կանանց՝ հաշվի է առնվում ընտանեկան վիճակը (ցանկալի է՝ ամուսնացած լինի), տարիքը (շատ երիտասարդ չլինի), պահանջում են բարձր կրթական մակարդակ և մասնագիտական կարողություններ, ինչը տղամարդու պարագայում մեծ դեր չի խաղում: Պատահական չէ, որ ընտրված կանանց 2/3-ն ամուսնացած է, շատերը բազմազավակ մայր են (չմոռանանք, որ հայ հասարակությունը մայրամեծար է), միջին տարիքը 45-50-ն է, կրթական ցենզը՝ բարձր: Ընտրությունների ժամանակ գյուղական համայնքներում առաջադրված կանանց 75%-ը հաջողության է հասնում: Այսինքն՝ գյուղում կանանց հաջողության գործակիցը բավականին բարձր է: Բայց դա բացատրվում է ոչ թե գյուղի բնակչության մոտ գենդերային կարծրատիպերի բացակայությամբ, այլ ուղղակի կանայք, որպես կանոն, ռիսկի չեն դիմում և առաջադրվում են միայն այն դեպքում, երբ հաստատ համոզված են, որ կընտրվեն: Չէ՞ որ հասարակական ընկալումներում համայնքապետ լինելը այնուամենայնիվ համարվում է տղամարդու գործ: Շատ դեպքերում տղամարդիկ համաձայն են քվեարկել կնոջ օգտին, եթե միայն այդ կինը իրենց հարազատը չէ: Հիմնավորում են դա նրանով, որ գյուղապետ լինելը ծանր գործ է, և նրանք չէին ցանկանա իրենց հարազատին այդպիսի ծանրաբեռնվածության մեջ տեսնել: Իհարկե, գովելի է, որ տղամարդիկ Հայաստանում շատ կնամեծար են և չեն ցանկանում կնոջ ուսերին բարդել կառավարման հոգսերն ու ծանր պարտականությունները: Սակայն թեթև՞ է արդյոք այն աշխատանքը, որ կատարում են գյուղի կանայք:

Հիշեցնենք ընդամենը մի քանի դրվագ գյուղի կանանց առօրյայից: Չգիտես ինչու՝ ջուր կրելը մեզանում համարվում է կնոջ գործ: Գյուղատնտեսական մթերքն իրացնելու համար մայրուղիներում կիզիչ արևի տակ ժամերով կանգնելը նույնպես բաժին է ընկնում կանանց: Գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության պայմաններում դաշտային աշխատանքները չեն տուժում, քանզի կան կանանց ձեռքերը: Ընտանիքի կարիքները հոգալու համար նրանք պատրաստ են ոտքով հսկայական տարածություններ անցնել կամ քաղաքներում տնետուն ընկած մածուն վաճառել: Նրանց 50%-ն աշխատում է սանիտարական նորմերին չհամապատասխանող պայմաններում, կատարում ծանր ֆիզիկական աշխատանք, որը չի համապատասխանում կնոջ օրգանիզմի ֆիզիոլոգիական առանձնահատկություններին: Գյուղի ենթակառուցվածքների քայքայման պայմաններում դրան գումարվում են լրացուցիչ ծանրաբեռնվածություն առաջացնող կենցաղային վատ պայմանները...

Մտահոգվա՞ծ են արդյոք դրանով համայնքների ղեկավարները: Երևի թե միայն կին գյուղապետների դեպքում, որոնք իրենց սեփական մաշկի վրա են զգացել բոլոր այդ դժվարությունները, նման հարց չի ծագում:

Լիլիթ Զաքարյան
Գենդերային հարցերով
փորձագետ

No comment

Սոֆոյին ճանաչում եմ մի քանի տարի: Նա շաբաթը երկու անգամ գալիս է մայրաքաղաք մածուն վաճառելու, ապրում է մոտակա գյուղերից մեկում: Երկու որդի ունի և, իր ասելով՝ լավ ամուսին: Ամուսինը լավն է, որովհետև երբեք ձեռք չի բարձրացրել նրա վրա, երիտասարդ տարիքում շատ է աշխատել և վաստակածը դրսում չի շռայլել, տուն է բերել, հարբեցողությամբ չի զբաղվել: Բայց այժմ ամուսինը հիվանդ է, և ընտանիքի հոգսը հիմնականում Սոֆոյի վրա է: Ճիշտ է, մեծ որդին բանակից արդեն եկել է, բայց մոր մեղքը գալիս է, շատ նիհար է, առանց այդ էլ շատ է տանջվում «բատրակություն» անելով ունևոր հարևանների մոտ: Կրտսեր որդին դեռ փոքր է, նրան էլ լավ սնունդ է անհրաժեշտ: Ընտանիքը դժվար է ապրում: Սոֆոն կաշվից դուրս է գալիս, բայց ծայրը ծայրին չի հասցնում, հաճախ իրենից է կտրում, որ որդիներին ու ամուսնուն կերակրի: Նրանք գլխի էլ չեն ընկնում, այլապես չեն համաձայնի: Իմ հաշվարկով՝ նա մոտ 35-40 կգ բեռ է քարշ տալիս Երևան՝ ցրելով իր, ինչպես ինքն է ասում՝ «կլիենտների» բնակարաններով: Սակայն վերջերս բողոքում է գլխապտույտից, ողնաշարի և մեջքի ցավերից: Ասում է՝ «Արդեն ջահել չեմ, մեծ եմ, տարիքս չի ներում»: «Տարիքն» էլ պարզեցի՝ ընդամենը 48 տարեկան է...

Փորձագետի
դիտարկումներից

Օգնության ձեռքը

Սուսաննա Մատինյան. «Մարդու տեղը որ նեղ է լինում, խպանում, ոսկի է դառնում»

«Հույսի կամուրջ» ՀԿ Դիլիջանի մասնաճյուղի ղեկավար Սուսաննա Մատինյանի կարծիքով՝ կինն իրավունք չունի հոգու կորովը կորցնել, չստեղծել, չարարել...

Սուսաննա Մատինյանը «Հույսի կամուրջի» Դիլիջանի Երեխայի զարգացման կենտրոնի սաներից մեկի հետ

Մանկավարժի ընտանիքում ծնված, մասնագիտությամբ երաժիշտ-մանկավարժ Սուսաննա Մատինյանը բոլոր աղջիկների նման երազում էր տուն, ընտանիք, երեխա ունենալ, ապրել երջանիկ ու անհոգ կյանքով: Երազանքներն իրականություն դարձան, սակայն առաջնեկի ծնունդը Սուսաննայի առջև անլուծելի թվացող խոչընդոտ ստեղծեց, որոնք հաղթահարելու համար նա պետք է պայքարեր: Տղան՝ Մուշեղը, ծնվել էր սահմանափակ մտավոր կարողություններով...

1993 թ., երբ Մուշեղն ընդամենը տասներկու տարեկան էր, ամուսինը՝ պատճառաբանելով, թե ամաչում է մարդկանցից, որ հաշմանդամ որդի ունի, լքում է ընտանիքը՝ կնոջն իրենց երկու երեխաների և բազում հոգսերի հետ մենակ թողնելով... Ամուսնու հեռանալուց հետո հուսահատությունից թևաթափ եղած Սուսաննայի ուսերին, բացի առօրյա հոգսերից, ծանրացան նաև այլ հոգսեր: Անհրաժեշտ էր համախմբել ուժերն ու պայքարել կյանքի հերթական հարվածին դիմակայելու համար՝ հանուն որդու և աղջկա լուսավոր ապագայի:

«Նեղության մեջ է մարդն ինքնադրսևորվում»,- ասում է նա:

Նա մի քանի տեղ երաժշտության դասեր էր տալիս, իսկ ազատ ժամերին մի գլուխ պանրի, մի լիտր կաթի դիմաց թավջութակի մասնավոր պարապմունքներ էր անցկացնում տանը, սակայն ստացված հասույթը չէր բավարարում լուծել նույնիսկ առաջնային կենցաղային խնդիրները: Տրանսպորտային ծախսերը հոգալու հնարավորություն չունենալու պատճառով նրա որդին զրկվեց Վանաձորում կամ Երևանում օժանդակ դպրոց հաճախելու և կրթություն ստանալու հնարավորությունից:

1999 թ. շրջադարձային եղավ Սուսաննայի համար, երբ հաշմանդամ երեխաների մայրերի կրթության ծրագրի շրջանակներում Դիլիջան այցելեց «Հույսի կամուրջ» ՀԿ նախագահ Սուսաննա Թադևոսյանը: Այդ ժամանակ էլ հիմնադրվեց կազմակերպության Դիլիջանի մասնաճյուղը, իսկ Սուսաննա Մատինյանը, մի կողմ թողնելով երաժիշտ-մանկավարժի մասնագիտությունը, սկսեց զբաղվել իրենց մարզի հաշմանդամ երեխաների ծնողների խնդիրներով և ղեկավարել «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Երեխայի զարգացման կենտրոնի աշխատանքները: Սկզբում աշխատում էր իր տանը, հետո քաղաքապետարանը նրանց խոնավ ու խավար մի նկուղային տարածք հատկացրեց, որն իսկական ջերմ օջախ դարձավ հաշմանդամ երեխաների և նրանց մայրերի համար: Կազմակերպության առաջնային նպատակը մարզի հաշմանդամ երեխաների և նրանց մայրերի սոցիալականացման խնդիրն էր:

«Ո՞վ եմ ես: Ես մի հյուլե էլ չեմ, բայց կարողացել եմ խոչընդոտներ հաղթահարելով՝ պայքարել ու առաջ գնալ: 1999-ին ես չէի կարող շատ բան երազել, բայց հիմա ինձ թույլ եմ տալիս երազել, որ հաշմանդամները կարող են կրթություն ստանալ, արհեստ սովորել, գումար վաստակել և ապրել անկաշկանդ կյանքով»,- ասում է Սուսաննան: Նա երջանիկ է, որ կարողանում է փոխել հաշմանդամ երեխաների ծնողների մտածելակերպը և օգնում նրանց երբևէ չընկճվել հասարակության մեջ:

Արմինե Գրիգորյան

«Ընկեր Նելլին մեր ավագանիների ավագն է»

Չորս երեխաների մայր և տասը թոռների տատ Նելլի Գոգինյանը Նոյեմբերյանի ավագանու առաջին կին անդամն է

Նոյեմբերյան քաղաքի ավագանու առաջին և միակ կին անդամը 62-ամյա Նելլի Գուգինյանն է, որը մասնագիտությամբ մանկավարժ է. «Գրեթե 40 տարի աշխատել եմ մանկապարտեզում, որից 25-ը՝ որպես վարիչ»,- հիշում է Նելլին: Աշխատանքից ազատվելուց կարճ ժամանակ անց տիկին Նելլին, չհաշտվելով հանգիստ կենսակերպի հետ, առաջադրվում է որպես Նոյեմբերյանի ավագանու անդամ:

«Ինձ ընտրեցին, որովհետև հարգում էին մեր ընտանիքը, և գիտեին, որ եթե դառնամ ավագանու անդամ, ուրեմն համայնքի նկատմամբ էլ ուշադիր, նվիրված կլինեմ,- ասում է Նելլի Գոգինյանը և հավելում,- ես ընտրվեցի, որ կարողանամ մարդկանց օգնել, առաջին հերթին՝ այն մարդկանց, որոնք ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեն»: Այս կանանց Նելլին հանդիպել է՝ այցելելով «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Նոյեմբերյանի մասնաճյուղ, որտեղ էլ գտնվում է Կանանց շահերի պաշտպանության խմբի կենտրոնը: «Երբ առաջին անգամ այցելեցի այնտեղ, շատ ճնշվեցի, որովհետև այդքան շատ ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող մարդ չէի տեսել, բայց հետո որոշեցի, որ ինքս պետք է օգնեմ նրանց»: 62-ամյա Նելլին ընդգրկվել է Կանանց շահերի պաշտպանության խմբում և համայնքի ավագանուն մշտապես իրազեկ է պահում կանանց խնդիրներին:

Տիկին Նելլին կազմել է անապահով ընտանիքների ցուցակը և ամեն հարմար առիթով փորձում է աջակցել նրանց: «Ես ավագանու հերթական նիստում նոր առաջարկով եմ հանդես գալու. եթե աշխատանքի տեղեր լինեն, առաջին հերթին պետք է ընդունեն անապահով ընտանիքների անդամներին: Ճիշտ է, մեր համայնքը հարուստ չէ, բայց հնարավորության դեպքում՝ պետք է հիմնադրամ լինի հատուկ կարիքներով մարդկանց աջակցելու համար»:

Տիկին Նելլին հեշտությամբ է հաջողվում ավագանու մյուս անդամների համաձայնությունը ստանալ, քանի որ գործընկերները հարգում են նրան. «Ես մեր ավագանու անդամներից ամենատարեցն եմ, մյուս անդամներն ասում են. «Ընկեր Նելլին մեր ավագանիների ավագն է»: Մեր տղաները շատ լավն են, ում էլ դիմեմ, ասեմ՝ պետք է այսինչ բանն անենք, անպայման կօգնի: Ընդհանրապես մեր ավագանու նիստերը շատ ջերմ և գործնական մթնոլորտում են անցնում, դրանում նաև ես ներդրում ունեմ, որովհետև կնոջ ներկայությամբ տղամարդիկ ավելի զուսպ և պարկեշտ են խոսում»,- ասում է Նելլին:

Գործունյա կինն անուշադրության չի մատնում նաև ընտանիքը. նա չորս երեխաների մայր է և 10 թոռների տատ: «Մեր երեք հոգանոց ընտանիքն այժմ 20 անդամ ունի: Ինձ սկեսուրս է շատ օգնել, նա խնամում էր չորս երեխաներիս, երբ ես աշխատում էի: Բացի այդ, շաշկու մրցումների էի մասնակցում: Այդ ընթացքում ընտանիքս մշտապես աջակցել է ինձ»,- հիշում է նա: Ընտանիքում և ընտանիքից դուրս ունեցած հաջողությունների համար տիկին Նելլին շնորհակալ է ամուսնուն՝ Արմենին: Գեղանկարիչ-քանդակագործ Արմեն Գոգինյանը նշում է, որ կնոջ հասարակական ակտիվությունը երբեք ընտանիքում վեճի առարկա չի եղել. «Ես հասել եմ հաջողությունների, որովհետև այս մեծ մարդն իմ կողքին է եղել,- ավելացնում է տիկին Նելլին: - Եթե ուրիշ ամուսին ունենայի, հնարավոր է, որ որպես մարդ ոչ մի տեղ չերևայի, լինեի միայն լավ կին, մայր ու տատ: Երբ ամուսնացանք, ես 19 տարեկան էի, Արմենը եղել է իմ առաջին դաստիարակը, օգնականն ու խորհրդատուն»:

Արման Ղարիբյան

Անոնս

Հաջորդ համարում կներկայացնենք «Հույսի կամուրջ» ՀԿ-ի «Արևածաղիկ» մանկապատանեական հանդեսը, որի ստեղծման աշխատանքներին մասնակցում են հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաներ: Ի դեպ, սեպտեմբերին լույս կտեսնի ամսաթերթի 10-ամյակին նվիրված հոբելյանական համարը:

Ամսագիրը տարածվում է անվճար: Այն լույս է տեսնում ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան մասնաճյուղի և «Առաքելություն Արևելք» դանիական բարեգործական կազմակերպության աջակցությամբ:

«Երիտասարդ սերնդի ձայնը»

«Տատիկս ասում է՝ հավասարության մասին խոսելն ամոթ է»

Այս տարվա հուլիսին Ծաղկաձորում «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կազմակերպած «Երիտասարդ սերնդի ձայնը» մանկապատանեական հավաքի ընթացքում շատ հիշարժան և հետաքրքիր պահեր կային: «Լռության գոտի» վավերագրական ֆիլմի դիտումն դրանցից մեկն էր միայն: Ֆիլմում մի աղջիկ պատմում էր Հայաստանի հեռավոր գյուղերում առկա կոշտ կարծրատիպերի մասին, որ խոչընդոտում են աղջիկների կրթությունն ու առաջխաղացումը: Ֆիլմի ավարտից հետո զրուցեցի հավաքի մի քանի մասնակիցների հետ: Պարզվեց՝ ոչ բոլորն էին համաձայն ֆիլմում արծարծված տեսակետներին, թեև հավաքի ընթացքում բավական աշխույժ մասնակցում էին գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված պարապմունքներին, ավելին՝ կանանց և տղամարդկանց հավասարությանը հասնելու ուղիներ առաջարկում:

Ինչևէ, լսենք նրանց կարծիքներն առանց մեկնաբանությունների, քանզի, ըստ իս, ամենակարևոր նպատակը, որ արտացոլված է հավաքի անվանման մեջ, արդեն իսկ իրականացված էր:

Հայաստանի տարբեր շրջաններից եկած 14-19 տարեկան այս պատանիներն ու աղջիկները արտահայտեցին իրենց կարծիքները՝ փորձելով իրականությանը նայել «գենդերային ակնոցով»: Եվ նույնիսկ նրանք, ում համար այս «ակնոցը» այնքան էլ հարմար չթվաց, կարող է հետագայում սովորեն ավելի լավ «տեսնել» կանանց և տղամարդկանց հավասարության հասնելու անհրաժեշտությունը:

«Երիտասարդ սերնդի ձայնը» մանկապատանեական ֆորումի մասնակիցները

Ագնես Գասպարբեկյան, 16 տարեկան, Երևան

Ես երազում եմ, որ մի օր մեզ մոտ էլ հավասարություն լինի սեռերի միջև, և հավասար լինեն թե աղջիկների և թե տղաների իրավունքներն ու հնարավորությունները, և երկուսն էլ ազատ լինեն իրենց որոշումների և ցանկությունների մեջ: Այսօր խտրականության դեպքեր ես շատ եմ տեսնում, օրինակ՝ դպրոցում շատ հարցերում տղաների նկատմամբ շատ ավելի մեղմ են, իսկ այդ նույն արարքի համար աղջիկներին ասում են. «Աղջիկ ես, չե՞ս ամաչում»: Ընտանիքում խտրականության դեպքեր նույնպես լինում են իմ ու եղբորս միջև, չնայած նա փոքր է, բայց նրան ավելի շատ ազատություններ են տալիս, քան ինձ:

Վահե Ամիրաղյան, 12 տարեկան, Նոյեմբերյան

Աղջիկներին պետք է խնայել և չթողնել, որ նրանք ծանր աշխատանք անեն: Դպրոցում էլ են նրանց խնայում, մեզ թողնում են իշուկի վրայից թռչել, իսկ նրանց՝ ոչ:

Լուսինե Նավասարդյան, 14 տարեկան, Բերդ

Ես մտածում եմ, որ Հայաստանում դեռևս չկա հավասարություն սեռերի միջև, միշտ տղամարդն ավելի վեր է դասվում կնոջից, չնայած շատ կանայք նույն աշխատանքը շատ ավելի լավ են կատարում, քան տղամարդիկ: Շրջապատում շատ եմ ականատես լինում դեպքերի, երբ, ասենք, ամենահասարակը, եղբայրը քրոջից ջուր է խնդրում, քույրը պարտավոր է բերել, իսկ երբ քույրն է եղբորից ջուր խնդրում, նա երբեք էլ չի բերի, այլ կասի. «Գնա, ինքդ վերցրու»: Իսկ ընկեր-ընկերուհի հարաբերություններում բազմիցս ականատես եմ եղել տղայի գերիշխող և երբեմն էլ հրամայական դիրքին, երբ նա ընկերուհուն արգելում է ամենատարրական բաներն իսկ, ասենք՝ ծնկից վեր զգեստ հագնել:

Լիդա Մովսիսյան, 19 տարեկան, Իջևան

Տղամարդը պետք է միշտ ավելի բարձր դիրք ունենա, քան կինը, որպեսզի երեխան տեսնի՝ տան գլխավորն ով է և ճիշտ դաստիարակություն ստանա: Բարձր պաշտոններում էլ պետք է միայն տղամարդիկ լինեն, քանի որ նրանք սառնասիրտ են և կարող են ճիշտ որոշումներ կայացնել, իսկ կանայք՝ ոչ, բացի այդ, պաշտոններ զբաղեցնող կանանց մասին վատ բաներ են խոսում:

Տիգրան Գրիգորյան, 16 տարեկան, Երևան

Անկախ սեռից, մարդը հասարակության լիիրավ անդամ պետք է լինի: Սակայն մեր բոլորիս էության մեջ է մտել, որ որոշ բաներ պետք է միայն տղամարդը որոշի: Ես էլ եմ այդպես կարծում՝ վերջին խոսքը միշտ տղամարդունը պետք է լինի, և տղամարդը միշտ պետք է կնոջից շատ վաստակի: Իսկ եթե ես կարող եմ ընտանիքս պահել, ապա ցանկալի է, որ կինս չաշխատի, թող նա երեխաներով և տնային գործերով զբաղվի:

Պատրաստեց Կարինե Պետրոսյանը

Հատուկ թողարկումը պատրաստվել է ՕՔՍՖԱՄ-ի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ

Oxfam

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Շնավորումը՝ Վահե Դիոնեսյանի
Տպաքանակը՝ 7000